

Վազգեն վարդապետ Պալճյանի (Վազգեն Ա վեհափառի) Ռումինիայի հայ համայնքում հոգևոր գործունեությունը 1943-1954 թթ.

Պողոսյան Լիլիթ Ա.

Երևանի պետական համալսարան, աստվածաբանության ֆակուլտետի կրոնագիտության ամբիոնի պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (Երևան, ՀՀ)

lilithpoghosyan@ysu.am

ՀՏԳ 27-72; EDN: KIWDZU;

DOI: 10.58587/18292437-2023.6-68

Հանգուցաբառեր՝ ռումինահայ, համայնք, ձեռնադրություն վարդապետ, համակենտրոնացման ճամբար, եկեղեցի, հոգևորական

The spiritual activity of father Vazgen Palchyan (Vazgen I Palchyan Catholicos) among Armenian community in 1943-1954 in Romania

Poghosyan Lilit A.

PhD, Associate Professor of the chair of Religious studies, Faculty of Theology, Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. The article is dedicated to the history of the entering of spiritual service by one of the prominent armenian catholicos Vazgen I Palchyan, in the diocese of the Armenian apostolic church in Romania. The historical and comparative-analytical methods were used in researching the work. The material of article was composed by combining interdisciplinary information. The mother of the young teacher, Levon-Karapet Palchyan, was initially against the idea of her son becoming a clergyman, but later she gave in, and in 1943 On September 30, Levon-Karapet Palchyan was ordained a priest, being renamed Vazgen. In article it have been touched the visit of Vazgen Palchyan to about a thousand armenian prisoners of war held by fascist Germany in Romania. That visit later became the content of Gulnazaryan's documentary story "Sermon of the father". The article also refers to scientist Asatur Mnatsakanyan's work- "Book written in the claws of barbed wire". With minor exceptions, the author wrote it in a fascist concentration camp. In the camp A. Mnatsakanyan handed over the book to father Vazgen Palchyan. Of course, many years later it was published. The article also refers to the first visit of Vazgen Palchyan to his motherland and a few years later he became a bishop.

Keywords: Armenian in Romania, community, ordination priest, concentration camp, church, clergyman

Духовная деятельность преподобного Вазгена Палчяна (впоследствии католикоса Вазгена I) в армянской общине Румынии в 1943-1954 гг.

Погосян Лилит А.

Ереванский государственный университет, факультет богословия, кандидат исторических наук, доцент кафедры религиоведения (Ереван, РА)

Аннотация. Статья посвящена истории вступления на духовную службу в румынской епархии Армянской Апостольской церкви одного из выдающихся армянских католикосов Вазгена I Палчяна. Исследование выполнено посредством исторического и сравнительно-аналитического методов, в русле объединения междисциплинарных сведений.

Мать молодого учителя поначалу не одобряет выбранную сыном стезю церковного служителя, однако со временем она уступает, и 30 сентября 1943 г. Левон-Карпет Пальчян рукополагается в сан священника с именем Вазген. В статье особое внимание обращено на посещение Вазгеном Палчяном около тысячи армянских военнопленных, удерживаемых фашистской Германией в Румынии. Позднее этот визит ставится в основу сюжета документального рассказа Х. Гульназаряна «Проповедь преподобного отца».

Работа также касается рукописного журнала художественных трудов заслуженного ученого Асатура Мнацаканяна – «Книги, написанной в когтях колочей проволоки». За небольшими исключениями, она почти целиком написана в фашистском концентрационном лагере. Там же А. Мнацаканян передает книгу духовному пастырю армян Румынии Вазгену Палчяну. Разумеется, много лет спустя она публикуется.

Далее в статье рассматривается первый визит архимандрита Вазгена Палчяна на родину и присвоение ему через несколько лет епископского сана.

Ключевые слова: Румынские армяне, община, рукоположение, архимандрит, концентрационный лагерь, церковь, священнослужитель

1937-1942 տարիների ընթացքում որոշակի մտերմություն էր ստեղծվել ռումինահայ թեմի առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրայանի և երիտասարդ ուսուցիչ Կարապետ Պալճյանի (հետագայում՝ Վազգեն Ա Պալճյան Ամենայն հայոց հայրապետ) միջև: Այդ ընթացքում վերջինիս հետաքրքրություններն առավել սևեռվում են դեպի հայոց եկեղեցին. նա սկսում է առանձնակի ուշադրություն դարձնել հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցական կանոնադրությանն ու դրա զարգացման ժամանակագրությանը:

1942 թ. Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրայանի վախճանվելուց հետո թեմական աթոռը մնացել էր թափուր, և ռումինահայ համայնքում հայապահպանմանն ուղղված իր գործունեության համար աչքի ընկած համալսարանավարտ ուսուցիչը հայրենակիցների կողմից ընտրվում է որպես արժանի հաջորդ: Այս առիթով ահա ինչ էր հետագայում հիշելու Վազգեն Ա վեհափառը. «Մի քանի ամիս հետո Հուսիկ արքեպիսկոպոսը, որ տարիքով բավականին առաջացած էր, մահացավ: Մահացավ, և հայ գաղութը շատ մտահոգվեց, որ ռումինահայությունը հայ եկեղեցիով պիտի մնա անգույն: Կային, անշուշտ, հոգևորականներ, բայց կիսազրազետ քահանաներ էին: Նրանք միայն ծիսակատարությամբ կարող էին զբաղվել, բայց ոչ՝ դեկավար, և մանավանդ ռումինական իշխանությունների առջև չէին կարող ներկայացնել հայությունը, նրա պրոբլեմները և այլն: Հայ գաղութի դեկավարները (աշխարհիկ դեկավարները) դիմեցին ինձ, որ ես հոգևորական դառնամ, քանի որ տեղացի էի, լավ ռումիններեն գիտեի ամեն ինչով և փնտրում էին մեկը, որ այդպիսին լինե, որ դժվար կացություններից դուրսով դուրս գա: Ես անակնկալի եկա և մերժեցի, ասելով, որ հոգևորական լինելու պատրաստ չեմ, դժգոհ չեմ իմ ասպարեզից, սիրում եմ ուսուցչությունը, ի վերջո այդ պատասխանատու գործի համար երիտասարդ եմ, անփորձ եմ և այլն, և այլն: Երևակայեցեք, վեց ամիս տևեցին, այսպես ասեմք, այդ խոսակցությունները, ինձ վրա բարոյական ճնշում գործադրվեց, թե՛ ազգի շահերի համար պետք է իմ համաձայնությունը... Վերջ ի վերջո, երևակայեցեք, համակերպվեցի և ընդունեցի հոգևորական դառնալու այդ առաջարկությունը» [9, էջեր 12-13]:

Ուշագրավ է, որ երիտասարդ ուսուցչի մայրն սկզբում ընդդիմացել է մինուևար որդուն կուսակրոն հոգևորական դարձնելու առաջարկին, բողոքել գաղթօջախի ղեկավարներին: «Թեևսական խորհուրդը միաձայն որոշում տվավ ինձ կուսակրոնության անցնելու, - տարիներ հետո հիշում է Վեհափառը, - մայրս, որ միակ զավակի ընտանիք կազմելը կերազե, երախտագրապես պետերու քով՝ բողոքելու: «Տիկին Սիրանուշ, - ըսած էին, - ազգին ծառայելու խնդիր կա, պարոն Կարապետեն ավելի հարմարը չենք գտներ»: Մայրս վրդովված պատասխանած էր. «Թող ձեր որդին

երթա ազգին ծառայելու: Դուք քանի մը հաս ունիք, ես միայն մեկը ունիմ» [7, էջ 47]:

Աստվածամեծար ու հայրենասեր տիկինն ի վերջո տեղի է տալիս, և Աստու կանչով և իր ժողովրդի ընտրությամբ 1943 թվականի սեպտեմբերի 30-ին Լևոն-Կարապետ Պալճյանն Աթենքում՝ Տուրդուդի-Ֆիքսի հայկական ս. Կարապետ եկեղեցում, Հունաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Մազումյանի կողմից ձեռնադրվում է քահանա՝ վերանվանվելով Վազգեն ու ստանալով նաև վարդապետական չորս աստիճաններ: Վարդապետի կնքահայրությունն ստանձնում է թեմական խորհրդի անդամներից Ռուբեն Բարայեյանը:



Նկ. 1. Վեհափառ Վազգեն Ա Պալճյանը վեհամոր՝ Սիրանուշ Պալճյանի հետ

Իր «Վազգեն» անվան կապակցությամբ վեհափառը 1986-ի փետրվարի 12-ի հայցազրույցի ժամանակ պատմել է հետևյալը. «Երբ արդեն հաստատասպես որոշել էի հոգևորական դառնալ և պատրաստվում էի մեկնել Հունաստան ձեռնադրվելու համար, կնքահայրս, Ռուբեն Բարայեյանը մի անգամ հարցրեց. «Լևոն, վարդապետ ձեռնադրվելու ժամանակ, մեր եկեղեցու ավանդական կանոնակարգի համաձայն, քո անունը պետք է փոխվի: Դու ի՞նչ անուն ես նախընտրել քեզ համար»: Պատասխանեցի, որ որևէ անուն ինձ համար տակավին չեմ ընտրել և որ այդ ամենը թողել եմ Կարապետ Մազումյանի հայեցողությանը: «Ո՛հ, ո՛հ, այդպես չի կարելի, - ինձ հակաճառեց կնքահայրս, - մի անուն քեզ համար մենք պիտի որոշենք և ես արդեն մտածել եմ այդ մասին: Եթե ես խնդրեմ, դու քեզ համար չե՛ս վերցնի վանեցի նշանավոր ազգային-ազատագրական գործիչ, բանաստեղծ, երգահան Վազգեն Տերդյանի «Վազգեն» անունը: Իմ առաջարկած այս անձնավորությունը այնպիսի համազգային մեծություն է և այքան լայն ճանաչում ու հեղինակություն ունի ինչպես Հայաստան աշխարհում, այպես էլ սփյուռքում, որ քեզ համար նրա անունը կրելը շատ գեղեցիկ կդիտվի: Եթե դու սկզբունքորեն համաձայն լինես, ես կկարողանամ

համոզել տ. Կարապետին»: Առաջարկությունը սկզբում տարօրինակ թվաց ինձ, քանզի «Վազգեն» անունը անսովոր էր և մեր հոգևորական իրականության մեջ նախօրինակը չունեցող, բայց կնքահորս մերժել չէի կարող: Տ. Կարապետ Մազրյանն էլ ինչ-որ անընդունելի ու արտառոց բան չգտավ այդ անվան մեջ և փարդապետական ձեռնադրության ժամանակ ինձ այդպես էլ կնքեց «տեր Վազգեն»: Ավերացնեմ նաև, որ մանավանդ 1955 թվականից հետո, երբ ես, կամոքն Աստուծո, ընտրվեցի Ամենայն հայոց կաթողիկոս, իմ անվան հետևությանը, մեկից ավելի եղան «տ. Վազգեն» անունով ձեռնադրված հոգևորականներ» [2, էջեր 289-291]:

Ձեռնադրություն ստանալուց անմիջապես հետո Տ. Վազգեն վարդապետը Բուխարեստի՝ իրեն ուղեկցող հայոց եկեղեցու ավագերեց Տ. Իգնատիոս ավագ քահանա Բիլիմյանի ընկերակցությամբ մեկնում է Սուչավայի [2, էջեր 289-291] հայոց ս. Հանկատար պատմական վանք¹, որտեղ էլ անցկացնում է իր քառասունը՝ Տ. Գնել ավագ քահանա Մանտայանի հոգևոր հովանավորության տակ: Ադոթի, պահեցողության և ծումապահության քառասնօրյա ժամանակաշրջանից հետո հոգեպես պայծառացած ու բարձրացած, լցված իմաստության լույսով և իր կոչման գիտակցությամբ՝ վերադառնում է Բուխարեստ՝ ստանձնելու ռումինահայ թեմի նախ՝ առաջնորդական փոխանորդի և ապա՝ թեմակալ առաջնորդի պաշտոնը: Տ. Վազգենն իր առաջին սուրբ պատարագը մատուցում է Բուխարեստի ս. Հրեշտակապետաց եկեղեցում՝ հոծ բազմության ներկայությամբ: «Քառասուն օրից հետո վերադարձա Բուխարեստ,- պատմում է վեհափառը,- 1943 թ. նոյեմբերի 28-ին Բուխարեստի հայոց սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում, խուռն բազմության ներկայությամբ, ես իմ անդրանիկ պատարագը մատուցեցի: Բուխարեստի ողջ հայությունը ներկա էր. ոչ միայն եկեղեցին էր լիքը, այլև ամբողջ շրջապատը» [2, էջեր 14-15]: Նա նաև հիշատակում է պատարագից հետո տեղի ունեցած ճաշկերույթը, որին մասնակցել է իր մտերիմներից մեկը՝ Դրաստամատ Կանայանը՝ հայտնի գորավար Դրոն:

Ռումինիայի հայոց թեմական պատգամավորական ժողովը Վազգեն վարդապետ Պալճյանին նույն օրն էլ ընտրում է առաջնորդական տեղապահ: Իսկ դեկտեմբերի 1-ին արդեն ռումինական կառավարության պետական հրովարտակով

հաստատվում է նրա ընտրությունը՝ առանց խնդիրներ առաջանալու, որովհետև, ինչպես Վազգեն Ա հայրապետն էր հետագայում հիշում, ռումիներենի քաջիմացությունն ու «տեղացի լինելը» մեծապես օգնում են իրեն:

Ինչպես հայտնի է, Վազգեն վարդապետ Պալճյանն ուներ ուսման անհագ ծարավ և ձեռնադրությունից անմիջապես հետո Բուխարեստի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում գրանցվում է որպես ունկնդիր և 1943-1944 թթ. մասնակցում այնտեղի դասընթացներին: Նա իր ստանձնած պաշտոնի և գործի բարձր գիտակցությամբ ու մեծ պատասխանատվությամբ է անցնում քարոզչական և հովվական ծանր, սակայն պատվաբեր գործին: Նրա ուսերին են ծանրանում Ռումինիայի ազգակիցներին հայ պահելու դժվարին գործն ու բեռը, որը կրելու համար անհրաժեշտ էին ուժերի գերլարում, անսահման սեր ու անկեղծություն և ինքնամոռացության հասնող հոգեկան անմնացորդ նվիրում: Տ. Վազգեն վարդապետը, հիրավի, դառնում է այդպիսի մի հոգևորական և առաքյալներին հատուկ տոկոնությամբ անդադար շրջում է համայնքից համայնք, տնից տուն՝ ջերմեռանդորեն տարածելով Աստուծո ճշմարիտ խոսքը, մայրենի բառն ու բանը, աստանդական հայրողիների մեջ սեր առաջացնելով մայր երկրի նկատմամբ, հայրենաշունչ քարոզներով ոգևորում ու ջերմացնում վիստվածներին, նրանց մղում ստեղծարար աշխատանքի և ազնիվ նպատակների իրականացման [3, էջեր 162-165]: Նա անդուլ եռանդով փորձում է թեմում բարձրացնել հայ հավատացյալների հոգևոր-բարոյական դաստիարակությունը, ցույց տալ ոգու կերտման իսկական ուղին, և այդ նպատակների իրականացմանը մեծապես նպաստում է 1945 թվականին Բուխարեստում նրա լույս ընծայած «Մեր պատարագը» գրքույկը:

Երկրորդ աշխարհամարտի դժնդակ տարիներին երիտասարդ հոգևորականին մտահոգում են ոչ միայն գաղթօջախի, այլև Փաշիստական Գերմանիայի կողմից Ռումինիայում պահվող շուրջ հազար հայ ռազմագերիների կացությունն ու նրանց հոգեբանական վիճակը: Հայր Վազգենին դժվարությամբ հաջողվում է ստանալ իշխանությունների թույլտվությունը՝ հայ գաղթօջախի համար՝ ազգակից ռազմագերիներին պարենով օգնելու, քահանաների համար՝ ճամբար այցելելու: Այդ ծանր օրերից մեկի մասին թանկագին հուշ է թողել արձակագիր Խաժակ Գյուլնազարյանը: Վերջինս, որ այդ շրջանում եղել էր հարյուրավոր ռազմագերիներից մեկը, իր վավերական պատմվածքներից մեկում («Տեր հոր քարոզը») հավաստում է հետևյալը. «Հանսկենսորոնացման ճամբարում, ուր թշնամին շարունակ պարծենում է, ստում, աշխատում փշրել հավատը, թե «ռուս՝ կապուտ, ռուս՝ կապուտ, շուտով

¹ Սուչավան ռումինահայության համար հանդիսացել է Անի քաղաքը՝ հայկական սրբավայրերի իր մեծ թվով: Այն միաժամանակ եղել է ոչ միայն գաղութի հնագույն, այլև խոշորագույն կենտրոնը: Այդտեղ է, որ հայերը միջնադարում կառուցել են ավելի քան 13 եկեղեցիներ ու վանքեր, որոնց մի մասը դեռևս կանգուն վիճակում է: Սուչավայի մոտ է գտնվում ոչ միայն Ռումինիայի, այլև Արևելյան Եվրոպայի հայ գաղթավայրերի հռչակավոր ուխտատեղին՝ Հանկատարի Ս. Աստվածածին վանքը, որը կառուցվել էր հայագրի վաճառական Տրդկան Տոնավագի կողմից 1512-ին:

կռիվը կվերջանա իմ հաղթանակով», որ «մեկը խելագարվում է, մեկը թուլացած բռունցքն է կծկում ու հուսահատ ուսուցումով թռչում հեղթասպահ սպայի վրա և գնդակահարվում...» [1, էջեր 241] ահա այդ մղձավանջում մի օր անսպասելի լուր է տարածվում, որ վաղը մի հայ քահանա է այցելելու ճամբար: Հյուժված, հոգեկան ուժն ու կորովը օրըստօրե կորցնող ռազմագերիները չեն հասկանում հոգևորականի այցելության նպատակը, իսկ առավել թերահավատներն էլ սկզբում կարծում են, թե «երևի գալիս է մեզ հաղորդ տալու, որ անհաղորդ չմեռնենք» [1, էջեր 242]:

Տեր հոր այցելության նպատակը, սակայն, ինչպես պարզվում է հաջորդ օրը, բոլորովին այլ էր՝ ճամբարի պետի և մինչև ատամները զինված հսկիչների աչալուրջ հսկողության ներքո ծածուկ խրախույս կարդալ ազգակիցներին, այն է՝ չընկճվել, չդավաճանել այն բանակին, որի զինվորներ են. «Տղաք, ի սեր Զրիստոսի չխնդաք, ինձի ալ կկորցնեք, ձեզի ալ... Խնդիրք մը ունիմ միայն, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից ամմեն... Տղաք, աստծու սիրույն, այս շուներուն չրլա թե հավատաք, չրլա թե հավատնիդ փոխեք: Մենք պզտիկ ազգ մըն ենք, Վասակ չրլաք, ամմեն: ...Չրլա թե կամավոր գրվիք, ձեր գորավարները, չեմ ուզեր ազգերնին տալ, որ ասոնք չհասկնան, արդեն կհաղթեն կգան, ամմեն... Մեծ գետին քովի քաղաքը, հոն ուր հայ գաղույժ մնալ կա, ձերոնք առեք են, առե՛ր են: Մնաք խաղաղությամբ, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից ամմեն...» [1, էջ 244]: Այս յուրօրինակ քարոզը կարդացող հոգևորականը հայր Վազգենն էր՝ հայոց ապագա կաթողիկոսը, որի քարոզ-խրախույսը մեծապես հիշեցնում է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում հայ կամավորական ջոկատների հետ ռազմի դաշտ մեկնած վիրահայոց հոգևոր թեմի քաջակորով առաջնորդ Ներսես Աշտարակեցու արժանավոր գործընկերոջ՝ Հարություն վարդապետ Ալամդարյանի (1793-1834) ազդեցիկ ճառը՝ արտասանված 1827 թվականի մայիսի 15-ին Թիֆլիսի՝ Մուղնու ս. Գևորգ եկեղեցու բակում և ուղղված «ինքնական գնդին զինվորության հայոց»։ «Անցանէ ահա դարն հինգերորդ, ո՛վ որքք Հայաստանի, յորմէ հետէ գրկեալ կամք ի թագաւորույթենէ, ի հայրենեաց և յամենայն ժառանգութեանց նախնեաց մերոց. հեծեմք ընդ ծանր լծով Զրիստոսաստեաց պարսից, վշտացեալ, թախծեալ ընդ անրով ծառայութեան այսոցիկ բարբարոսաց, զի կողոպտեցին սոքա ի մէջ ոչ գարտաքին ստացուածս ևէթ, այլ յաւար հարին և գբարոյական և գբնատուր ձիրս Հայկազանց: ...Եւ ահա՛ ձայն Աստուծոյ, ձայն Թագաւորի կոչեն զձեզ, հօ՛տ փոքրիկ, յասպարէզ փառաց և առաքինութեան: Արիացէ՛ք և դիմեցէ՛ք յայն հսկայօրէն քայլարկութեամբ: ...Լուիցէ՛ ձեզ Տէր յաւուր անձկութեան, օգնական եղիցի ձեզ յանուն Աստուծոյ Յակովբայ: Ամէն» [6, էջեր 273-247]:

Խ. Գյուլնագարյանի վերոհիշյալ պատմվածքն ուշարժան է նաև այլ տեսանկյունից. այնտեղ չափազանց շոշափելի կենդանագրված է երիտասարդ հայր Վազգենը՝ առողջ, բարեսէս ու ազնվաբարո. «Այդ մի գեղեցիկ, բարձրահասակ, լայնաթիկունք տղամարդ էր: Նա լայն ճակատ ուներ, գանգուր, երկար մազեր, շագանակագույն թավ մորուքի մեջ ոչ մի սպիտակ մազ չկար, սև, նշաձև աչքերը փառվում էին խորամանկ, երիտասարդական կրակով, իսկ ուռուցիկ կրծքին, ծանրագին հանդերձի վրա կոկետորեն պրպրում էր մի ոսկեհուռ խաչ» [1, էջեր 242-243]:

Բարդ ու հետաքրքիր ճակատագիր է վիճակվել բազմավաստակ գիտնական Ասատուր Մնացականյանի «Գիրք՝ գրված փշալարի ճանկերում» գեղարվեստական գործերի (հուշեր, դիմանկարներ, խորհրդածություններ, բանաստեղծություններ) ձեռագիր մատյանին՝ չնչին բացառություններով գրված ֆաշիստական համակենտրոնացման ճամբարում, ահ ու սարսափի ներքո, մահվան ամենօրյա սպասումից գերլարված զգացումով, կտակի, աղոթքի ու վերջին խոսքի պատասխանատվությամբ ու անկեղծությամբ, հոգու ամբողջ պարունակությունը թեկուզև մի սրտացավ ընթերցողի հասցնելու հույսով...։

Գիրքը բաղկացած է արձակ և չափածո հատվածներից: Նրանում եղած գեղարվեստական գործերը մեծ մասամբ գրվել են 1943-ի ամռանն ու աշնանը՝ Ռուսիայի Տիմիշոարա համակենտրոնացման ճամբարում: Չարմանալի լույս կա այս գրքում. չնայած հեղինակն ապրել է սովի, ցրտի, բռնության, ամենօրյա մեռնողների շարքերում, սակայն Երևանի, Մատենադարանի, Ոսկեվազ գյուղի, սիրելի կնոջ, քույրերի, մոր և նորածին որդու կերպարները զգացել է ամեն պահի, երագել ու հավատացել, թե հանդիպելու է նրանց [5, էջեր 277-281]:

Եվ Աստծու նախախնամությամբ այդ ընթերցողը դառնում է ռուսիահայության հոգևոր հովիվ տեր Վազգեն վարդապետ Պալճյանը, ով, ինչպես արդեն վկայվեց վերոշարադրյալում, թույլտվություն էր ստացել այցելել այդ երկրում գտնվող հայ գերյալներին: Դողդողացող ձեռքով, բոլորից գաղտնի Վազգեն վարդապետին հանձնելով խունացած թղթերի վրա գուրգուրանքով գրած իր նվիրական տողերը՝ հեղինակը խնդրում է իր մահվան դեպքում ձեռագիրը մի հնարով հասցնել հայրենիք՝ իր տիկնոջը՝ Մարգոյին, իսկ եթե ինքը հրաշքով կենդանի մնա, երախտագիտությամբ կայցելի նրան ու հետ կվերցնի: Կաշի ու ոսկոր դարձած ճամբարականը որտեղից իմանար, որ կյանքի խաչուղիներից մեկում իրեն հանդիպած վարդապետն Աստծու նախախնամությամբ պիտի մի օր օժվեր Նորին սուրբ Օծություն Ամենայն հայոց կաթողիկոս Տեր

Տեր Վազգեն Ա անունով, իսկ ինքն էլ պատերազմի ավարտից հետո գերիների փոխանակման բարեհաճ դիպվածով վերադառնալու է իր ժողովրդի, իր հարազատների մոտ: Այդքան սպասված հանդիպումը, իհարկե, կայանում է Մայր աթոռում, սակայն, հանգամանքների բերումով, հեղինակն առավել ապահով է համարում փորձությունների միջով անցած իր մատյանը նվիրաբերել ս. Էջմիածնին: Միևնույն է, տպագրելու մասին խոսք անգամ լինել չէր կարող, և միաժամանակ, բազում վտանգներով էր լի գերության մեջ գրած մատյանը տանը պահելը:

1983 թ. հունիսին, երբ Ասատուր Մնացականյանն իր մահկանացուն է կնքում, Մայր տաճարում այդ առթիվ տրվում է պատարագ, որին ներկա են լինում հանգուցյալի հարազատները, ընկեր-բարեկամները, գրողներ, գիտնականներ... [8, էջ 4] Ահա այդ ժամանակ վեհափառ հայրապետը մեկ շաբաթով հիշյալ մատյանը հանձնում է նրա որդուն՝ Մամիկոն Մնացականյանին՝ լուսապատճենը հանելու և ըստ ցանկության տնօրինելու, բայց ձեռագիրը՝ վերստին տաճարի ձեռագրատուն վերադարձնելու պայմանով: Այդ տարիներին ևս հիշյալ գիրքն անտարակուսելիորեն դեռ վաղ էր տպագրել, և հանուն լուսապատճենի ապահովության՝ այն ի պահ է տրվում Մատենադարանին, որտեղ բազմաթիվ տարիներ տքնել էին նշանավոր երախտավորն ու իր տիկինը՝ ի շահ հայ գիտության և մշակույթի: Միայն Հայաստանի Հանրապետության անկախացումից տարիներ անց Ասատուր Մնացականյանի հարսի՝ Մինա Մնացականյանի ջանքերով փոքր-ինչ ուշացումով, հրատարակվում է Վազգեն վեհափառի «փրկած» հայ նախկին ռազմագերու աշխատանքը: Այս առիթով ահա ինչ է գրում Երվանդ Պետրոսյանը. ««Գիրք՝ գրված փշալարի ճանկերում» յուրահատուկ ժողովածուն գալիս է մեկ այլ կողմից լրացնելու «Հայկական զարդարվեստ», «Հայրեններ» կյոթողային գրքերի և մյուս արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակի ստեղծագործական հարուստ դիմանկարը» [8, էջ 4]:

Բանիմաց ու եռանդուն վարդապետը 1945 թվականի գարնանը ս. Էջմիածնում մասնակցում է կաթողիկոսական ընտրությունների համար հրավիրված ազգային-եկեղեցական ժողովին՝ որպես ռումինահայ թեմի առաջնորդական փոխանորդ: Դեռ մանուկ օրերից հայրենիքը տեսնելու և նրա սրբազան հողը, մասունքները համբուրելու անսահման կարոտ էր կուտակվել վարդապետի հոգում: Եվ ահա տարիների ընթացքում նրա փայփայած այդ նվիրական իղձերը դառնում են իրականություն: Հայաստան մտնելիս՝ նա ծնկում, համբուրում է հայրենի հողը և բացականչում. «Երևան... Արարատյան դաշտ... Հայաստան... Կանգնած եմ ահա մեր մեծ նախնիքներու հողին վրա ու կարոտակեզ կսեղմնեմ ջերմ ձեռ-

քերը իմ հայաստանցի եղբայրներուն, իմ հարազատ եղբայրներուն: Դարերով կուտակված կարոտներ, հույզեր, տենչեր այժմ հանկարծ իմ մեջ կարթնանան, մարմին կառնեն գիտակցության լույսին տակ և կարեկոծեն բովանդակ էությունս: Անանուն, անուշ հուզումներ այիք-այիք ուժգին կգարնվին սրտիս արևոտ ափերուն և հորդառատ ու քաղցրահոս կողողեն հոգիս, կտարածվին շուրջս ամեն կողմ, բոլոր սահմաններն անդին, կհային ամեն ինչի, մինչև հորիզոնները հեռավոր... Ինչ սրբազան սպրումներ... կյանքիս առավելագույն երջանկության պահն է, գոր կսպրիմ: Ես այ կուզեմ գոչել՝ «Կանգ առ, թույ՛ն, դուն այնքան գեղեցիկ ես» [12, էջ 5]:

Ոգևորված մայր Հայաստան այցելությամբ՝ Վազգեն վարդապետ Պալճյանը լավագույն զգացումներով վերադառնում է Ռումինիա՝ ռումինահայերին տանելով Ամենայն հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի օրհնությունը: Վերջինս Վազգեն վարդապետի հետ ունեցած բազմաթիվ մտերմիկ գրույցների ընթացքում խորապես համոզվում է նրա բացառիկ ընդունակություններով, շնորհներով և ուշիմությամբ օժտված վառ անհատականություն լինելու մեջ: Դա է վկայում վեհափառի՝ ռումինահայ թեմական խորհրդին ուղղված 1945 թվականի դեկտեմբերի 14-ի նամակը, որտեղ գրված է. «Տ. Վազգեն վարդապետի՝ ժամանակին և հաջող ընտրությունը թեմական խորհրդի խոհականության և հեռատեսության վկայականներն են: Նա իր համեստությամբ, պարկեշտությամբ, պատրաստվածությամբ և խելքով գրավեց ինձ, և ես հավատացած եմ, որ մի քանի տարուց հետո իր փորձառությամբ և օգտակար գործունեությամբ եպիսկոպոսական ձեռնադրության կարժանանա և ժողովրդական ընտրությամբ կբազմի Ռումինիո հայոց թեմի առաջնորդական աթոռին: Ընտրության հաջորդող ձեռնադրության արագացումը գտնում եմ տեղին և շատ գովելի, որի համար հայտնում եմ հայրական գոհունակությունս և հայրապետական օրհնությունս» [11, էջ 17]:

Նախնյաց բնօրրան այցելությունը դառնում է ուրույն խթան, որպեսզի բազմաձիք վարդապետը կրկնապատկի իր ուժն ու եռանդը՝ քարոզելու համազգային գաղափարաբանություն: Հայրենիք այցելությունից հետո նա վստահությամբ է քարոզ կարդում օտար ափերում ծվարած իր հայրենակիցներին և պատգամում. «Կա մեկ հայ ժողովուրդ, կա մեկ հայ հայրենիք, կա մեկ ճակատագիր, հետևաբար կա մեկ կամեցողություն և գործելու մեկ ուղղություն: Ժամանակն է, որ գաղութահայությունը, հայրենասիրական լրիվ գիտակցությամբ, հոգեպես ազատագրված անցյալի հուսալքումներէ, շփոթ ու անորոշ սպրումներէ, այսօրվան իրականության պայծառ լույսին առաջ, դեմ հանդիման կանգնի իր կենդանի հայրենիքին և իր աչքերը անոր հառած՝ գտնե իր ճշմարիտ ուղին: Թող լսե հայրենյաց հրավերը ու

հետևի անոր ձայնին» [10, էջ 17]: Վազգեն վարդապետ Պալճյանն այդ շրջանում իր ամբողջ ուժն ու կարողությունը ներդնում է ռումինահայ թեմի եկեղեցական ու ազգային-հայրենասիրական աշխատանքների ծավալմանը: Նրան կարելի էր հանդիպել ամենուր՝ թե՛ եկեղեցում քարոզելիս և թե՛ դասախոսելիս, ուր հայրենակիցներին ու օտարներին ծանոթացնում էր հայ բազմադարյան մշակույթին [4, էջեր 42-46]:

Եվ այդ բոլորանվեր աշխատանքի ու ազգին անչափ նվիրվածության և տրևաջան աշխատանքի համար էլ 1948 թ. ռումինահայ թեմի պատգամավորական ժողովը Վազգեն վարդապետին ընտրում է առաջնորդ, իսկ Գևորգ Չ Ամենայն հայոց կաթողիկոսը նույն թվականի մայիսի 23-ին՝ կիրակի օրը, ս. Էջմիածնի Մայր տաճարում իր հայրապետական օրհնությամբ Վազգեն վարդապետին շնորհում է ծայրագույնության աստիճան: Չի ուշանում նաև հոգևոր առաջնորդի՝ Էլ ավելի բարձր աստիճանը. երեք տարի հետո, 1951 թվականի հուլիսի 3-ին, Գևորգ Չ-ն ռումինահայ ազգային-եկեղեցական իշխանությունների և ժողովրդի համաձայնությամբ Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանին շնորհում է եպիսկոպոսական աստիճան: Այսպիսով, նորընծա եպիսկոպոսն օձակից է դառնում Հակոբյան միաբանության անդամներ Նորայր Պողոթյանին, Սուրեն Քեմհանյանին, Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Եղիշե Տերտերյանին և Մայր աթոռի լուսարարապետ Սահակ Տեր-Հովհաննիսյանին:

1954 թվականի մայիսին Գևորգ Չ Ամենայն հայոց կաթողիկոսի² թաղման արարողության առիթով Վազգեն սրբազանը գլխավորում է ռումինահայ թեմի պատգամավորական խումբը: Նա նույն թվականի մայիսի 27-ին հանդես է գալիս «Հայ եկեղեցվո անփոխարինելի կորուստը» դամբանականով, իսկ հուլիսին՝ ռադիո-ելույթով՝ Երևանից [13, էջ 18]: Հողարկավորության և սգո արարողություններից հետո հիշյալ թվականի հունիսին Մայր աթոռում հրավիրվում է եպիսկոպոսական ժողով, որի ընթացքում ռումինահայ թեմի առաջնորդն ընտրվում է ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ: Դեկտեմբերի 31-ին բուլղարահայ թեմի ցանկությամբ և խնդրանքով ս. Էջմիածնի Գերագույն խորհուրդը որոշում է Վազգեն եպիսկոպոսին վստահել նաև բուլղարահայ թեմի առաջնորդությունը: Նա այցելում է այդ թեմի բոլոր եկեղեցիները, պատարագ մատուցում, քարոզներ կարդում և ծանոթանում տեղի հայության հոգսերին:

Այսպիսով, Լևոն-Կարապետ Պալճյանը հոգևոր ծառայության անցնելով՝ որպես ազգանվեր և եկեղեցանվեր անհատ, իր գործունեությամբ արեց հնարավոր և անհնար ամեն ինչ սփյուռքում սպրոդ հայորդիների սրտերում վառ պահելու սերն ու կապվածությունը Հայաստան աշխարհի և հայոց եկեղեցու նկատմամբ: Նա իր օրինակով ցույց տվեց, թե ինչպիսին պետք է լինի իսկական հայր և նվիրյալ հոգևորականը: Անհրաժեշտ ենք համարում, ավելացնել նաև այն, որ Վազգեն Ա վեհափառը նույնպիսի նվիրվածությամբ ծառայեց Հայ առաքելական եկեղեցում և իր ազգօգուտ և հայասեր գործունեությամբ գրեթե քառասուն տարի շենագրեց հայ եկեղեցին՝ հայրենիքում և սփյուռքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գյուլնազարյան Խ.**, «Ոսկի որոնողները», Հայպետհրատ: - Եր., 1964, էջ 400:
2. **Գոլանջյան Ս.**, Ռումինահայության Անին. Մուշավայի հայ գաղութը: - Եր., 2000: - 414 էջ:
3. **Դևրիկյան Վ. Գ.**, Հայ եկեղեցու հավատարիմ սպասավորը: // «Էջմիածին» հանդես, 1998, Ա, էջ 162-165:
4. **Դևրիկյան Վ. Գ.**, Վազգեն Վեհափառը // «Էջմիածին» հանդես, 2008, թիվ Ժ, էջ 42-46:
5. **Դոլուխանյան Ա.**, Եզակի միջնադարագետը (Նվիրվում է Ասատուր Մնացականյանի 100 ամյա հոբելյանին): // Պատմա-բանասիրական հանդես, № 2, 2012, էջ 277-281:
6. **Երիցյան Ա.**, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Մասն Ա (1800-1832): - Թիֆլիս: Ծարաձե տպ., 1894, էջ 652:
7. **Կապուտիկյան Ս.**, «Նա իր գոյությամբ սրբացնում էր մթնոլորտը», Հուշապատում: - Էջմիածին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, 2004: - 52 էջ:
8. **Մնացականյան Ա.**, Գիրք՝ գրված փշալարի ճանկերում: - Եր.: «Նաիրի» հրատ, 1997, էջ 208:
9. Ոգեղեն կյանք, (Վազգեն Ա Վեհափառ հայրապետի ծննդյան 90-ամյակին), աշխատ.՝ Հ. Պապիկյանի, Չ. Գալստյանի, խմբագիր՝ Գ. Հարությունյան: - 84 էջ:
10. **Պալճյան Վազգեն**, Խոսք հայրենիքի մասին: - Բուխարեստ, «Նոր կյանք» հրատ., 1945: - 86 էջ:
11. **Սահակյան Ա.**, Ամենայն հայոց կաթողիկոս Ս. Ս. Վազգեն Առաջին (Կյանքն ու գործունեությունը): 2001: - 43 էջ:
12. **Վազգեն եպիսկոպոս Պալճյան**, Հայրենի արևին տակ: - Պուքրեշ, «Նոր կյանք» հրատ., 1954: - 109 էջ:
13. **Վանեցի Ս.**, «Ժամանակագրություն», Վազգեն Առաջին Կաթողիկոս Ամենայն հայոց: - Էջմիածին, 1990: - 113 էջ:

² Ամենայն հայոց կաթողիկոս Ս. Ս. Գևորգ Չ Չորեքյանը ծնվել էր 1868 թվականի նոյեմբերի 2-ին Նոր Նախիջևանում, Ամենայն հայոց կաթողիկոս էր ընտրվել 1945-ի հունիսի 22-ին: Վախճանվել է 1954 թվականի մայիսի 9-ին:

Сдана/Հանձնվել է՝ 05.11.2023
 Рецензирована/Գրախոսվել է՝ 08.11.2023
 Принята/Ընդունվել է՝ 15.11.2023